

ուանէին զանոնք ուումէնները, կամ հայերու՝ որոնք կը յենուէին պաշտպան հովիտներու վըրայ, ինչպէս անդրդանուբեան թրակիացիները կը կրթնէին, յոյներուն եւ ապա հռոմայեցիներուն դէմ, Կարպաթեան հովիտներուն վրայ:

«Աղեքսանդր Մակեդոնացիի ժառանգորդները՝ հռոմայեցիք գրաւեցին, Տրայանոսի օրով, թրակիացիներուն Դակիան (Dacia), բայց միեւնոյն ատեն, միշտ Տրայանոսի օրով, յաղթեցին նաեւ միւս թրակիացիներու հայաստանին: Բայց հռոմէական տարրին թափանցումը Հայաստանի մէջ այն չափով չեղաւ ինչ չափով որ եղաւ Դակիայի մէջ. ահա թէ ինչու հայերը աւելի թրակիացի մնացին, մինչդեռ զակիացիները աւելի յետոյ երեւան եկան իրրեւ ուումէններ:

«Հռոմէական տիրապետութեան շրջանին՝ հայերը կ'ապրին իրրեւ հպատակ պետութիւն մը. ունին իրենց թագաւորները՝ կախուած Հռոմի կայսրերէն եւ յաճախ անոնց իսկ կողմէ անուանուած: Երբ, Ասիոյ կեդրոնին մէջ, պարսիկները երեւան կուգան եւ կը սկսին քաղաքական կեանք մը, հայերը կուռի նիւթ են ընդմէջ հռոմայեցիներուն եւ պարսիկներուն, մինչեւ որ հռոմէական կայսրութիւնը կը նըւաղի եւ պարսիկները կը տիրեն Հայաստանի Քրիստոսէ ետք Ե. դարուն: Հայաստանի կը նախանձէին իր տնտեսական կարեւորութեան համար, որովհետեւ այս երկրին մէջ կը խաչածեւուին Կասպեան եւ Սեւ ծովու եզերքներու առեւտրական ճանապարհները Հնդկաստանէն եկող ճամբաներուն հետ: Վաճառականութիւնը որ տեղի կ'ունենար այդ շրջաններուն մէջ Աղեքսանդր Մակեդոնացիի ժամանակուան յոյներուն մտածել տուաւ Կասպեան ծովը ջրանցքով միացնել Սեւ ծովուն:

«Երբ Արեւելքի հռոմէական պետութիւնը վերահաստատուեցաւ, այս անգամ Բիւզանդիոնի յոյն կայսրութեան երեւայթին տակ, Հայաստանի մէկ մասը իլուեցաւ պարսիկներէն: Երբ ենթարկուեցաւ Բիւզանդիոնի՝ Հայաստան տնտեսապէս զարգացաւ առաւել քան երբեք: Սկսան երեւան գալ ծաղկեալ քաղաքներ՝ Թիֆլիս, Կարին եւ Տրապիզոն, իրենց բիւզանդական յիշատակարաններով եւ առեւտուրով հարստացած բնակչութեամբ, բիւզանդացիք՝

նախաձեռնող հին յոյներուն այդ այլեւերած ժառանգորդները՝ անկարող ըլլալով բռնագրաւել առեւտուրը: Վրաստանի հայերէն կայսրեր եւ պատրիարքներ կ'ըլլան Պոլսոյ մէջ, իսկ, հայկ. պետութեանց մէջ, գրեթէ անկախ էին պետերը:

«ԺԱ. դարէն սկսեալ կը տարածուի սպառնացող իշխանութիւնը Սելճուքեան թուրքներուն, որոնք կը տիրանան ամբողջ Փոքր Ասիոյ եւ իրենց լուծին տակ վերստին կը միցանեն բոլոր հայկական նահանգները՝ որոնցմէ ոմանք կը գանուէին պարսիկ տիրապետութեան տակ, իսկ ուրիշներ կ'ստուած էին արաբներուն եւ Բիւզանդիոնի միջեւ: Այս նոր տիրապետութեան տակ, հազիւ (ebauche') հայերը գրեթէ միակ վաճառականներն են Արեւելքի, փոխանակութեան միջնորդները այս խայտարեղէտ ժողովուրդներուն միջեւ, որոնք միշտ գտնուած են Փոքր Ասիոյ մէջ: Երբ Արեւմտեան Եւրոպան կը խլրտի եւ Սաչակրութեանց կը մեկնի կասեցնելու համար մահիկին յառաջխաղացումը, հայերը առաջին նեցուկներն են Ասիոյ լատին երեւուն տիրապետութեան: Պասլը հոն ալ տիրողոսներ կը բաշխէ ինչպէս այլուր: Կը ըստեղծուի Թագաւոր Ամենայն Հայոց մը (Rex Omnium Armenorum), ինչպէս Իօնիցան Պապին կողմէ «վալաքներու եւ պուլկարներու թագաւոր» շինուած էր, եւ ինչպէս յետոյ մեր վօյլոսներուն պիտի տրուէր «ամբողջ ուումէն երկրի իշխան» տիրողոսը: Արեւելքի մէջ լատին իշխանութիւնը աւելի խօսք էր, եւ տեւեց այնքան ատեն որ անհասկացողութիւնները կային թուրք ցեղերու մէջ: ԺԳ. դարուն թուրք տիրապետութիւնը կը տարածուի, եւ կ'ամրանայ բովանդակ Փոքր Ասիոյ մէջ՝ սկսելով Եւրոպա ալ անցնիլ: Արեւելքի մէջ Հայոց առեւտրական գործունէութեան համար գետին չկար այլեւս, եւ հետեւանքով կը գաղթեն անոնք երկու ուղղութեամբ. Ա. դէպի Միջերկրական, անկէ Արշիպիղագոս եւ Յունաստան, եւ նոյնիսկ աւելի հեռուն դէպի Արեւմուտք, եւ Բ. դէպի հիւսիսային եզերքները Սեւ ծովու, իտալական Սրիմի մէջ, Ռուսիա, Լեհաստան, եւ յետոյ դէպի Մոլդովա:

«Այսպէս, իրենց պատմութեան երկու գըլխաւոր վայրկեաններուն, հայերը կը ստիպ-